

**ՀՀ ՀԱՐԵՎԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԱԶՄԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ՈԱԶՄԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
(ԹՈՒՐՔԻԱ, ԱՂԲԵՋԱՆ)**

ԱԶԱՏ ԴԱՎԹՅԱՆ, տնտեսական գիտությունների թեկնածու, ՀՀ ՊՆ Պաշտպանական
ազգային հետազոտական համալսարանի Ազգային ռազմավարական
հետազոտությունների ինստիտուտի Տարածաշրջանային ռազմավարական
վերլուծությունների կենտրոնի գիտնական-վերլուծաբան, Քաղաքական գիտության
Հայաստանի ասոցիացիայի անդամ

ԹՈՒՐՔԻԱ

20-րդ դարում Թուրքիայի ռազմական արդյունաբերության հիմնման և զարգացման առաջին փուլերում նշանակալի դեր են ունեցել Արևմտյան պետությունները: Այսպես, Երկրորդ համաշխարհային պատերազմից առաջ թուրքական ՌԱՀ-ի գործարանների կառուցման և զինված ուժերի հագուստավորման աշխատանքները ղեկավարում էին գերմանացի մասնագետներ: Գերմանիայից ներկրվում էին գործարանային հագուստավորման նշանակալի մասը, ինչպես նաև գնվում ռազմական տեխնիկայի արտադրության նախագծեր և պատրաստի օրինակներ: Այնուհետև, 1943 թ. Մեծ Բրիտանիայի վարչապետ Ուինսթոն Չերչիլի և Թուրքիայի նախագահ Իսմեթ Ինյոնի հանդիպման արդյունքում Թուրքիայի դաշինքամետ կողմնորոշման հաշվառմամբ որոշում էր կայացվել Թուրքիային մատակարարել ժամանակակից ՍՌՏ-եր: 1950-ական թվականներին խորհրդային միության սպառնալիքին ի պատասխան Թուրքիան ակտիվացնում է ռազմատեխնիկական համագործակցությունը Արևմուտքի հետ: Այդ ժամանակահատվածից սկսած Թուրքիայի ռազմարդյունաբերության զարգացման գործում նշանակալի դեր է սկսում խաղալ ԱՄՆ-ը, իսկ Թուրքիան 1952 թ. անդամակցում է Հյուսիսատլանտյան դաշինքին: Թուրքիայում ստեղծվում են ՌԱՀ-ի նոր ձեռնարկություններ և ընդլայնվում են կառուցված գործարանների հնարավորությունները: Արդյունքում, 1970 թթ. սկզբին Թուրքիայում ստեղծվում է ռազմական արդյունաբերություն, որը ընդունակ էր բավարարել երկրի զինված ուժերի պահանջարկը հրազենային և հրետանային սպառազինությունների արտադրության, վերանորոգման և

թիկունքային ապահովման գծով: Թուրքական գործարանները դեռևս չէին կարողանում արտադրել ծանր և տրանսպորտային ռազմական տեխնիկա, կապի միջոցներ, ժամանակակից մարտական ինքնաթիռներ և խոշոր ռազմական նավեր: Թուրքիան դեռևս կախվածության մեջ էր օտարերկրյա մատակարարներից հրթիռային սպառազինությունների և ռազմական ռադիոէլեկտրոնիկայի ոլորտում:

1975 թ. ի պատասխան թուրքական ռազմական ուժերի կողմից Հյուսիսային Կիպրոսի օկուպացման ԱՄՆ-ի Կոնգրեսը էմբարգո է դնում Թուրքիային ամերիկյան զենքի մատակարարման վրա: Այդ պահից Թուրքիան որոշում է անցնել ներկրման փոխարինման քաղաքականության՝ առաջին հերթին ՍՌՏ-երի ամենակարևոր տեսակների սեփական արտադրության միջոցով: 1975 թ. Թուրքիայի ազգային անվտանգության խորհուրդը ընդունում է ռազմական ուժերի զարգացման առաջին հնգամյա պլանը, որը ենթադրում էր թուրքական ՌԱՀ-ի արդիականացում և վերակազմակերպում: Ձևավորվում է ռազմական մատակարարման հայեցակարգը, որը ենթադրում էր օտարերկրյա գործընկերների հետ ՍՌՏ-երի ներկրման գծով յուրաքանչյուր պայմանագրում Թուրքիայում դրանց արտադրության հիմնման պահանջի սահմանում: ՍՌՏ-երի մատակարարողները արդեն պարտավոր էին ՌԱՀ-ի ձեռնարկություններ հիմնել Թուրքիայում: Ընդ որում՝ այդ ձեռնարկությունների սեփականության վերահսկիչ փաթեթը (51 %) պետք է պատկաներ թուրքական կողմին:

1970-1980 թթ. ՍՌՏ-երի արտադրության համար Թուրքիան ստանում է մեծ քանակությամբ արտոնագրեր: 1978 թ. ԱՄՆ-ի կողմից էմբարգոն հանվում է, իսկ 1980 թ. կողմերը ստորագրում են ռազմատեխնիկական համագործակցության զարգացման պայմանագիր, որի արդյունքում ստեղծվում է երկկողմանի աշխատանքային խումբ:

1980 թ. սեպտեմբերի 12-ին ռազմական հեղաշրջումից հետո զինվորականները իշխանության են բերում «տեխնոկրատներին»՝ Տուրգուտ Օզալի գլխավորությամբ, ով սկսում է լայնամասշտաբ տնտեսական բարեփոխումներ: Որոշում է կայացվում նաև փոխել ռազմական արդյունաբերության կառավարման կառուցվածքը: 1985 թ. Թուրքիայի նախարարների խորհրդի ներքո ստեղծվում է պաշտպանական արդյունաբերության քարտուղարություն և տարբեր ձեռնարկությունների գործունեության կոորդինացման ֆունկցիաները փոխանցվում են այդ քարտուղարությանը: Այդ մարմնի ռազմավարական նպատակն էր այնպիսի ՌԱՀ-ի ստեղծումը, որը ընդունակ կլինի առավելապես ապահովել

երկրի զինված ուժերի կարիքները¹: Այս համատեքստում վարվում էր մատակարարումներից թուրքիայի կախվածության թուլացման քաղաքականություն՝ աջակցելով կրիտիկական տեխնոլոգիաների զարգացմանը, գործընկերությունների ձևավորմանը և համատեղ ձեռնարկությունների ստեղծմանը: Քարտուղարությունը նաև աջակցում է վերջերս սահմանված նպատակին հասնելուն. 2023 թ. թուրքիան ՍՌՏ-երի արտահանումը պետք է հասցնի 25 միլիարդ դոլարի²:

1980 թթ.-ից սկսած թուրքիայի կառավարությունը հետևողականորեն իրականացրել է ազգային ռազմարդյունաբերական համալիրի արդիականացմանն ու օպտիմալացմանը, ինչպես նաև ներկրվող սպառազինությունների և ռազմական տեխնիկայի մասնաբաժնի կրճատմանն ուղղված ծրագիր: Այս համատեքստում, թուրք մասնագետները նշանակալի առաջընթաց են գրանցել ռազմական արդյունաբերության մի շարք, այդ թվում՝ ռադիոէլեկտրոնիկայի, նավաշինության, ինչպես նաև զրահատանկային ոլորտներում³:

2012-2016 թթ. թուրքական ՌԱՀ-ի զարգացման ռազմավարության համաձայն՝ արդյունաբերության առջև դրված առաջնային խնդիրների թվում էր արտահանվող ռազմական նշանակության արտադրանքի ծավալը հասցնել մինչև տարեկան 1.8 միլիարդ դոլարի: Ուշադրություն էր դարձվում տեղեկատվական ցանցերի մշակմանը, արբանյակային կապի և հրթիռային զենքի կառավարման համակարգերի, ինչպես նաև ռադիոէլեկտրոնային հակադրման միջոցների արտադրությանը: Ներկայումս առաջնահերթ ոլորտների թվին է դասվում նաև սեփական բազմանպատակային ուղղաթիռի, հակաօդային պաշտպանության միջոցների և հակատանկային սպառազինությունների արտադրությունը:

Դրված խնդիրների լուծման ուղղությամբ թուրքիայի հիմնական գործընկերներն են ԱՄՆ-ը, ՆԱՏՕ-ի եվրոպական պետությունները, ինչպես նաև Իսրայելը: Ընդ որում՝ այդ երկրների հետ համագործակցությունում առաջնային կարևորություն է նոր տեխնոլոգիաների յուրացման և հեռանկարային սպառազինությունների համատեղ մշակման աշխատանքները:

¹ Stu Кольцов А., Модернизация военно-промышленного комплекса Турции, 2011, <https://cyberleninka.ru/article/n/modernizatsiya-voenno-promyshlennogo-kompleksa-turtsii>

² Stu BMI Research, A FitchGroup Company, Turkey defence & security report includes 10-year forecasts to 2026, 2017

³ Stu Военно-промышленный комплекс Турции, 2015, http://factmil.com/publ/strana/turcija/voenno_promyshlennyj_kompleks_turcii_2015/29-1-0-888

Վերջին տարիներին նկատվում է ռազմատեխնիկական ոլորտում Թուրքիայի կողմից Հարավ/Հարավ-Արևելյան Ասիայի, Մերձավոր Արևելքի և Կովկասի պետությունների կաևորում⁴: Միևնույն ժամանակ Ասիայի, Մերձավոր Արևելքի և Կովկասի երկրների Թուրքիան վաճառում է հիմնականում ամբողջական ՍՌՏ համակարգեր, որոնք թուրքական ընկերությունների համար ապահովում են ավելի մեծ եկամուտներ՝ առանց ռազմական տեխնոլոգիաների փոխանցման: Դրանով թուրքական ձեռնարկությունները պահպանում են իրենց համեմատական առավելությունները⁵:

Թուրքական զինված ուժերի արդիականացման քաղաքականությունը և ռազմական արդյունաբերության զարգացումը ներառում է երեք բաղադրիչ.

- տեղական արտադրություն, որտեղ առաջնահերթությունը տրվում է թուրքական ընկերությունների մշակումներին և արտադրական բազայի ընդլայնմանը,
- կոնսորցիում կամ համատեղ արտադրություն, որը արդյունավետության հաշվառմամբ ենթադրում է համագործակցություն այլ երկրների կամ ընկերությունների հետ,
- ուղղակի գնումներ, որը ենթադրում է պատրաստի արտադրանքի ձեռքբերում թուրքական ընկերությունների և կապիտալի մասնակցությամբ⁶:

Պետք է նշել, որ ռազմատեխնիկական համագործակցությունում Թուրքիան պայմանագրեր է կնքում օֆսեթ տարբերակով (offset – ներկրման պայմանագրի դրույթ, որը պարտավորեցնում է արտահանողին բավարարել ներկրող կողմի երկրորդ նպատակը, որը կապված չէ ապրանքների և ծառայությունների գնման հետ):

ՍՌՏ-երի համաշխարհային շուկայում առաջատար դիրք գրավելու Թուրքիայի հնարավորությունները առաջին հերթին կապված են տեխնոլոգիական հետամնացության հաղթահարման անհրաժեշտության հետ: Մեկ այլ մտահոգիչ խնդիր է թուրքական ՍՌՏ-երի արտահանման կառուցվածքը: Մասնավորապես, Թուրքիայի դեպքում գերակշիռ

⁴ Stu Wisniewski R., Military-industrial aspects of Turkish defense policy, 2015, <http://rie.amu.edu.pl/wp-content/uploads/2016/02/9-2015-215.pdf>

⁵ Տես նույն տեղում:

⁶ Տես Овсеян Л., Вооруженные силы Турции в процессе трансформации и модернизации: стратегия и тенденции, 2013, <https://elibrary.ru/item.asp?id=20891426>

մասնաբաժին ունի առաջին անհրաժեշտության ռազմական արտադրանքի արտահանումը, որը իհարկե շահութաբեր է և ունի պահանջարկ, սակայն չունի առավելագույն ավելացված արժեք: Չնայած թուրքական ՌԱՀ-ը արժեքային շղթայում զարգացման փուլում է, այնուամենայնիվ, որոշակի ժամանակ կպահանջվի մինչև այն մշակի ավելի առաջավոր ապրանքներ⁷:

Ընդհանուր առմամբ, Թուրքիայի ՌԱՀ-ի ուժեղ կողմներն են ազգային պաշտպանական ձեռնարկություններին լայն աջակցությունը, միջազգային գործընկերների հետ ռազմավարական համաձայնագրերը, խոշոր պաշտպանական բյուջեն, համեմատած եվրոպական անալոզների հետ ՍՌՏ-երի համեմատաբար էժան գինը:

Թույլ կողմերի թվում են որոշ ապրանքների ներկրումից շարունակական կախվածությունը, մասնավորապես՝ օդատիեզերական և հրթիռային պաշտպանության համակարգերի ոլորտում, կոռուպցիոն բարձր մակարդակը, խոշոր ռազմական օպերացիոն ծախսերը, որը ինչ որ կերպ սահմանափակում է պաշտպանական գնումների աճումը և հետազոտությունների և մշակումների ծախսային տեղաբաշխումները⁸:

Քանի որ Թուրքիան 2023 թ. նպատակ է դրել դառնալու ամբողջությամբ ինքնաբավ իր պաշտպանական ոլորտի կարիքների բավարարման գործում, դա կբերի ռազմարդյունաբերության ոլորտում արտաքին մատակարարումներից Թուրքիայի կախվածության վերացման: Արդյունքում, սպասվում է ռազմատեխնիկական համագործակցության ոլորտում Թուրքիայի արտաքին համագործակցության (այդ թվում ՆԱՏՕ-ի հետ) ավելի լայն վերակողմորոշում: Այնուամենայնիվ, Թուրքիայի և ՆԱՏՕ-ի միջև դաշինքը շարունակելու է կարևորագույն ռազմավարական նշանակություն ունենալ Թուրքիայի համար⁹:

Իր հմուտ աշխատուժով և արագորեն ընդլայնվող արդյունաբերությամբ, Թուրքիան կարող է հանդես գալ ռազմական արտադրանքի խոշոր մատակարար ոչ միայն որպես զարգացող շուկաների դարպաս, այլ նաև որպես վստահելի և ուժեղ գործընկեր՝ ունենալով եվրոպական և տարածաշրջանային գործընկերների հետ լայնորեն ինտեգրված արդյունաբերական բազա:

⁷ Stu նույն տեղում:

⁸ Stu BMI Research, A FitchGroup Company, Turkey defence & security report includes 10-year forecasts to 2026, 2017, National Defense University Library & Learning Center

⁹ Stu Turkey's power play: The creation of an indigenous military industry and its Neo-Ottoman offensive, 2016, <http://researchturkey.org/turkeys-powers-play-the-creation-of-an-indigenous-military-industry-and-its-neo-ottoman-offensive/>

Ռազմական արդյունաբերության զարգացման գործում հասած հաջողությունները Թուրքիային հնարավորություն են տալիս այլ երկրների հետ իրականացնել ռազմական ոլորտում համագործակցության ծրագրեր, առաջին հերթին՝ Ադրբեջանի, Վրաստանի, Ալբանիայի, Բոսնիայի և Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու պետությունների հետ, որոնք գտնվում են Թուրքիայի ռազմավարական շահերի կենտրոնում:

ՍՌՏ-երի մատակարարման շնորհիվ Թուրքիան կկարողանա բարձրացնել իր հեղինակությունը և ուժեղացնել այդ երկրների վրա ռազմաքաղաքական ազդեցությունը, ինչպես ներկայումս դա տեղի է ունենում Ադրբեջանի և Վրաստանի դեպքում: Ռազմական արդյունաբերության զարգացումը համապատասխանում է Թուրքիայի աշխարհաքաղաքական նկրտումներին, որը ձգտում է հասնել ռազմական առավելության ոչ միայն տարածաշրջանում, այլ նաև դրանից դուրս:

Ամենահինտենսիվ համագործակցությունը ծավալվում է Ադրբեջանի հետ, որի հետ երկխոսությունը ձեռք է բերել ռազմավարական գործընկերության և փոխօգնության կարգավիճակ 2010 թ.-ից¹⁰: Ի տարբերություն Ադրբեջանի հետ հարաբերությունների՝ Թուրքիան լուրջ քայլեր չի ձեռնարկում Վրաստանի ՌԱՀ-ի վերականգնման համար: Վրաստանի հետ Թուրքիան համագործակցում է ռազմական կրթության և ուղղակի ռազմական վաճառքի ոլորտներում:

Անկասկած այլ երկրների հետ համեմատությամբ Թուրքիայի օգնությունը կարող է թվալ ոչ այնքան նշանակալի: Այսպես, բացարձակապես ակնհայտ է, որ վրացական զինված ուժերին Թուրքիայի օգնությունը զիջում է իր մասշտաբներով ամերիկյան օգնությանը և առանձին ոլորտներում ուկրաինականին¹¹:

Չինաստան-Թուրքիա հարաբերությունները դինամիկ զարգանում են: Եվ Չինաստանը, և Թուրքիան նպատակաուղղված են նոր գործընկերությունների միջոցով մեծացնելու Եվրասիա մայրցամաքում իրենց ազդեցությունը: Այնուամենայնիվ, երկու երկրներում էլ աշխատուժի համեմատաբար ցածր արժեքի պայմաններում տնտեսական տարբեր ոլորտներում՝ հատկապես տեքստիլ և շինարարական ոլորտում Չինաստանն ու Թուրքիան կարող են դառնալ լուրջ մրցակիցներ: Թուրքիան և Չինաստանը կարող են նաև մրցակցել Կենտրոնական Ասիայում իրենց ազդեցության և ռեսուրսների ներգրավման հարցում: Մյուս

¹⁰ Stu Парубочая, Е., Сотрудничество Турции и Азербайджана в военной сфере на рубеже 20-21 веков, 2015, <https://cyberleninka.ru/article/n/sotrudnichestvo-turtsii-i-azerbaydzhana-v-voennoy-sfere-na-rubezhe-xx-xxi-vekov>

¹¹ Stu Овсеян Л., Вооруженные силы Турции в процессе трансформации и модернизации: стратегия и тенденции, 2013, <https://elibrary.ru/item.asp?id=20891426>

կողմից, ԱՄՆ-ի ճնշումները նույնպես հավանաբար կսահմանափակեն Չինաստանի հետ ռազմատեխնիկական համագործակցությունը զարգացնելու Թուրքիայի շահագրգռվածությունը¹²:

Ինչպես և Իրանը Թուրքիան նույնպես վարում է ռազմական արդյունաբերության ինքնաբավության ապահովման քաղաքականություն: Երկու պետություններն էլ հետապնդում են դառնալու ՍՌՏ-երի համաշխարհային շուկայում առաջատար պետություններ: Ռազմական արդյունաբերության զարգացման համար երկու պետություններն էլ կարևորել են գիտատեխնիկական ոլորտում ներդրումների իրականացումը, ռազմական և երկակի նշանակության օտարերկրյա տեխնոլոգիաների ներգրավումը և ռազմական և քաղաքացիական հատվածների առավելագույն փոխօգնությունը:

ԱՂՐԲԵՋԱՆ

Աղբբեջանը ռազմական արդյունաբերության զարգացմանն ուղղված նշանակալի քայլեր սկսեց ձեռնարկել 2000-ական թվականներից: 2000 թ.-ից Աղբբեջանը ընդունել է ռազմական նոր քաղաքականություն, որը թույլ է տալիս զարգացնելու ռազմական/պաշտպանական արդյունաբերությունը, իսկ 2005 թ. հիմնվել է Պաշտպանական արդյունաբերության նախարարությունը: Չնայած Աղբբեջանի ռազմական արդյունաբերությունը կենտրոնանում է Ռուսաստանից, Իսրայելից, Թուրքիայից, Պակիստանից և Բելառուսից տարբեր ՍՌՏ-երի գնման վրա, Աղբբեջանը զուգահեռաբար քայլեր է ձեռնարկում սեփական ՌԱՀ-ի զարգացման ուղղությամբ: Այսպես, ներկայումս համաձայն Պաշտպանական արդյունաբերության նախարարության վիճակագրական տվյալներին, Աղբբեջանը առաջարկում է շուրջ 1100 տեսակի տեղական արտադրության զենքեր, ներառյալ՝ մեքենաներ, հրացաններ, ականներ և ռազմական սարքավորումներ:

Նախորդ տարի ADEX-2016 ցուցահանդեսին Աղբբեջանը ներկայացրել է տեղական արտադրության սպառազինությունները: Երկրի նոր արտադրված զինատեսակների թվում է ցերեկային և գիշերային տեսախցիկով «Shimshak-10» շարժական զենքը՝ արտադրված զլխավորապես տանկերի և անձնական զրահամեքենաների համար, հատուկ ուժերի համար «Gurza» մարտական մեքենան, «BRDM-2»՝ թուրքական արտադրության հակատանկային սպառազինությամբ, «Istiglal-1T» հրացանը, «Yalguzag» և «Mubariz» դիպուկահար

¹² Stu Weitz R., Turkey's new regional security role: Implications for the United States, Strategic Studies Institut and U.S. Army War College Press, 2014, <https://ssi.armywarcollege.edu/pdffiles/PUB1218.pdf>

հրացանները, որոնք համարվում են տեղական արդյունաբերության ամենահայտնի զենքերը¹³:

Ադրբեջանում արտադրվում է տարբեր տեսակի հրաձգային զենք և մոտակա մարտի միջոցներ, հրետանային զենքեր, զրահատեխնիկա, տարբեր ավիացիոն ռումբեր, ԱԹՍ-եր, հրաձգային զենքի տարբեր տեսակներ, օպտիկական սարքեր, նռնականետեր, ականներ, ՆԱՏՕ-ի չափանիշներին համապատասխանող ատրճանակներ և այլն:

Ադրբեջանի 10 գլխավոր ռազմական արտադրանքների թվում է «UP-7.62» և «HP-7.62» ձեռքի գնդացիները, «Mübariz» դիպուկահար հրացանը, «Zərbə» հարվածային ԱԹՍ-երը, «Yalqusaq» ադրբեջանական դիպուկահար հրացանը և «Мародер» զրահապատ ավտոմեքենան: Ադրբեջանում արտադրվում է «ցամաք-ցամաք», «օդ-ցամաք» և «օդ-օդ» տիպի հրթիռներ: Ադրբեջանում սկսվել է նաև հրթիռային զենքի արտադրություն¹⁴:

Ադրբեջանը շահագրգռված է արևմտյան արտադրության ՍՌՏ-երի այնպիսի տեսականու մատակարարման մեջ, որը համապատասխանում է Արցախյան հիմնախնդրում նրա ռազմական գերակայության ապահովմանը: Նախապատվությունը տրվում է հրետանային սարքավորումների, օդային համակարգերի դեմ պայքարի միջոցների, ինչպես նաև դրանց ռազմամթերքի գնմանը: Ադրբեջանը ջանքեր է ներդնում արևմտյան տեխնոլոգիաների ներգրավման և տեղական ռազմարդյունաբերական ձեռնարկություններում դրանց յուրացման համար:

Ադրբեջանը ռազմաքաղաքական դաշինքների անդամ-պետություն չէ, Թուրքիայի, Ռուսաստանի և Իրանի հետ հարաբերություններում վարում է հավասարակշռված քաղաքականություն և միաժամանակ խորացնում է Արևմտյան պետությունների հետ համագործակցությունը:

Չնայած Ադրբեջանը գտնվում է նաև այլ եռակողմ համագործակցության ձևաչափերում (Ադրբեջան – Իրան – Ռուսաստան, Ադրբեջան – Թուրքիա – Թուրքմենստան, Ադրբեջան – Իրան – Թուրքիա), Ադրբեջան – Վրաստան – Թուրքիա համագործակցության ձևաչափը միակն է, որը ունի ռազմական չափումներ: Ընդ որում՝ այս եռակողմ ռազմական համագործակցության միջկառավարական բնույթը ոչ ներբեռնում է ռազմական կառուցվածքի մասնակիցներին, ոչ էլ նպաստում ավանդական ձևով տարածաշրջանային ռազմական

¹³ Stu Shahbazov F., Azerbaijan: From a country with Soviet-Era industry to a weapons exporter, 2017, <http://www.israeldefense.co.il/en/node/29394>

¹⁴ Stu Top-10 мощнейшего оружия азербайджанского производства, 2016, <http://novosti.az/azerbajjan/3465.html>

դաշինքի հիմնմանը: Սա կոնվենցիոնալ և ոչ կոնվենցիոնալ սպառնալիքներից իրենց պաշտպանելու ուղղությամբ այդ երեք երկրների ընդհանուր շահերի հիման վրա ստեղծված համագործակցության ձևաչափ է: Այս համատեքստում, Վրաստանը, Ադրբեջանը և Թուրքիան համատեղում են իրենց ջանքերը զարգացնելու կարողությունները ռազմական փորձի փոխանակման, ռազմական խորհրդատվությունների և էներգետիկ ենթակառուցվածքների անվտանգության ապահովման համատեղ զորավարժությունների միջոցով:

Ադրբեջան-Վրաստան-Թուրքիա ձևաչափով ռազմական համագործակցությունը կարող է ներառել նաև ռազմական-ճարտարագիտության, օդային պաշտպանության, փրկարարական գործողությունների, կիբեռ ահաբեկչության և այլ ոլորտներում զորավարժությունների իրականացում¹⁵:

Ադրբեջանն ու Թուրքիան ունեն ռազմատեխնիկական համագործակցության ոլորտում ամենից սերտ երկկողմանի կապեր: Ադրբեջանի և Թուրքիայի միջև ռազմավարական գործընկերությունը հաստատվել է 2010 թ. դեկտեմբերին: Երկկողմանի կնքված համաձայնագիրը, որը բաղկացած էր 23 հոդվածներից և 5 գլխից, երաշխավորում էր փոխադարձ օգնություն, եթե կողմերից մեկը դառնում էր ռազմական հարձակման կամ ագրեսիայի օբյեկտ:

Պետք է նշել, որ ավելի քան 20 թուրքական ընկերություններ սերտ համագործակցում են ադրբեջանական գործընկերների հետ: Օրինակ՝ կարելի է նշել թուրքական Roketsan ընկերությունը, որը 2009 թ. մարտին Ադրբեջանի պաշտպանական արդյունաբերության նախարարության Iqlim գիտաարտադրական միավորման հետ սկսել է 107 և 122 մմ կալիբրի բազմախողովակ հրթիռային սարքավորումների արտադրությունը:

Երկու կողմները համագործակցում են «Altay» և «Milgem» տանկերի համատեղ արտադրություն սկսելու ուղղությամբ:

2010 թ. համաձայնագրի ստորագրումից հետո պարբերաբար սկսել են անց կացվել Թուրքիայի և Ադրբեջանի բարձրագույն ռազմական ղեկավարությունների միջև հանդիպումներ և զինված ուժերի համատեղ զորավարժություններ:

¹⁵ Steu Gurbanov I., Revitalizing the military dimension of the Azerbaijan-Georgia-Turkey tripartite partnership, 2017, <https://www.cacianalyst.org/publications/analytical-articles/item/13459-revitalizing-the-military-dimension-of-the-azerbaijan-georgia-turkey-tripartite-partnership.html>

Ադրբեջանի և Թուրքիայի ռազմատեխնիկական համագործակցության ոլորտում առկա են մի շարք պարադոքսալ հարցեր: Մասնավորապես, Թուրքիան և Ադրբեջանը չեն ստեղծել որևէ ռազմական միություն և չեն ստորագրել ռազմաքաղաքական դաշինք կազմելու համաձայնագիր, ինչպես դա արել են Ռուսաստանն ու Հայաստանը: Այնուամենայնիվ, կան մի շարք կարևոր համաձայնագրեր, որոնք ստորագրվել են երկու երկրների միջև՝ ներառյալ Նախիջևանի 5-րդ բանակի արձանագրությունը, ինչպես նաև նյութական, տեխնիկական գնումների և ռազմական կրթության ոլորտներում համաձայնագրերը: Թուրքիան օգնել է Ադրբեջանին ձևավորելու զինված ուժերի պրոֆեսիոնալ դպրոցը: Թուրքիան նաև աջակցել է Ադրբեջանին Քալա կրթական կենտրոնի ստեղծման ուղղությամբ: Այսօր թուրք զինվորականները աշխատում են Ադրբեջանի նավատորմում որպես խորհրդատուներ: Ադրբեջանցի օդաչուները սովորում են Թուրքիայում և Ադրբեջանը արդիականացնում է իր ինքնաթիռները Թուրքիայում:

Թուրքիան ցանկանում է ստեղծել երաշխիքներ Ռուսաստան-Հայաստան դաշինքի վատ արդյունքների դեմ՝ ուժեղացնելով ռազմական համագործակցությունը Ադրբեջանի հետ: Թուրքական զինված ուժերը ՆԱՏՕ-ի ստանդարտացմամբ աջակցում են Ադրբեջանի զորքերին արդիականացման, կազմակերպչական կառուցվածքի և ռազմական կրթության ոլորտներում¹⁶:

Ադրբեջանի և Հարավաֆրիկյան հանրապետության միջև ռազմատեխնիկական համագործակցության հիմքում ընկած է «Մատադոր» և «Մարոդեր» զրահամեքենաների համատեղ արտադրությունը և դրանք Կենտրոնական Ասիայի և ԱՊՀ-ի երկրներ արտահանումը: Այս պահին ոչ Ռուսաստանը, ոչ Ուկրաինան, ոչ Բելառուսը որպես անիվային և թրթուռավոր տեխնիկայի մատակարարներ չունեն «Մատադորի» և «Մարոդերի» անալոգներ, ինչը Ադրբեջանին հնարավորություն է տալիս ՍՌՏ-երի շուկայում հանդես գալ ոչ միայն որպես սպառող, այլ նաև մատակարար¹⁷:

Ռազմական ոլորտում ադրբեջանա-թուրքական երկխոսության ակտիվացումը գրավել է նաև Վրաստանին: 2012 թ. վրացական զինված ուժերը առաջին անգամ մասնակցել են ադրբեջանա-թուրքական զորավարություններին: Ավելի ուշ Ադրբեջանը, Վրաստանը և Թուրքիան որոշել են ամրապնդել և ընդլայնել իրենց միությունը՝ ստեղծելով համատեղ

¹⁶ Stu Oztarsu F. M., Military relations of Turkey and Azerbaijan, 2011, http://strategicoutlook.org/publications/military_relations_turkeyandazerbaijan.pdf

խորհրդատվությունների և միջոցառումների պարբերաբար անցկացման մեխանիզմներ: Այսպես, 2014 թ. օգոստոսին նրանց միջև համաձայնություն է հաստատվել նոր դիվանագիտական ձևաչափի ձևավորման համար. եռակողմ հանդիպումներ Ադրբեջանի, Վրաստանի և Թուրքիայի պաշտպանության նախարարների միջև, որը իրականացվում է տարին երկու անգամ: Դրանից բացի, կողմերը որոշել են պարբերաբար իրականացնել համատեղ զորավարություններ: Աստիճանաբար Ադրբեջանի, Վրաստանի և Թուրքիայի ռազմական համագործակցության հիմնական նպատակը դարձավ կարևոր ռազմավարական ենթակառուցվածքային օբյեկտների պաշտպանության մոդելի մշակումը, առաջին հերթին՝ խողովակաշարերի: Այնուամենայնիվ, եռակողմ համագործակցության բոլոր դրական ասպեկտների հաշվառմամբ՝ նվազագույնն է հավանակությունը, որ այդ համագործակցությունը կվերածվի միասնական երկարաժամկետ նպատակներով և խնդիրներով մոնոլիտ ռազմավարական դաշինքի:

Երկրորդ հերթին, Ադրբեջանի, Վրաստանի և Թուրքիայի փոխգործակցությունը չափազանց անհավասարակշռված է: Ի տարբերություն՝ Վրաստանի և Ադրբեջանի Թուրքիան տիրապետում է անհամեմատ հզոր տնտեսական և ռազմաքաղաքական լծակների և չի թաքցնում իր էքսպանսիոն նպատակները: Չնայած դրան բոլոր երեք երկրները շահագրգռված են նման եռակողմ ձևաչափի գոյության մեջ և աջակցելու ու զարգացնելու են իրենց համագործակցությունը թեկուզ և սահմանափակ խնդիրների շուրջ¹⁸:

Պակիստանի միջուկային հզորություն ունենալու կարգավիճակի հաշվառմամբ՝ համակցված դինամիկ ռազմական հզորությամբ, այդ պետության հետ Ադրբեջանի ռազմական համագործակցությունը կարող է դիտվել որպես կարևոր հենք երկկողմանի հարաբերությունների խորացման համար: Բացի միացյալ զորավարություններից՝ Ադրբեջանի և Պակիստանի միջև ռազմական և պաշտպանական համագործակցությունը ստացել է բարձր մակարդակում երկարատև երկխոսության կարգավիճակ, ինչպես նաև 2014 թ. փետրվարին Իսլամաբադում կնքվել է ռազմական համագործակցության մասին համաձայնագիրը: Նույն համաձայնագիրը նորացվել է 2015 և 2016 թթ.¹⁹:

¹⁸ Stu Турция-Азербайджан-Грузия: военное сотрудничество и риски региональной стабильности, 2017, <http://vpoanalytics.com/2017/06/21/turtsiya-azerbajdzhan-gruziya-voennoe-sotrudnichestvo-i-riski-regionalnoj-stabilnosti/>

¹⁹ Stu Shahbazov F., Azerbaijan's growing military cooperation with Pakistan, 2017, <http://thediplomat.com/2017/01/azerbajians-growing-military-cooperation-with-pakistan/>

2009 թ. դառնալով Իսրայելի արտաքին գործերի նախարար Ա. Լիբերմանը ֆիքսել է Իսրայելի արտաքին քաղաքականության առաջնահերթ ուղղությունները՝ բազմավեկտոր արտաքին քաղաքականություն, ներառյալ ԱՊՀ երկրների, Ռուսաստանի և Կենտրոնական Ասիայի երկրների հետ հարաբերությունների խորացում և ամրապնդում, ինչպես նաև ճնշումների գործադրում Իրանի վրա արտաքին քաղաքականության հարթությունում: Ա. Լիբերմանը անվանել է Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի մուսուլմանական պետությունների հետ քաղաքական երկխոսության ձևավորումը կարևորագույն խնդիր: Այս ուղղությամբ իսրայելական քաղաքականության առաջնահերթություններն են՝ Ադրբեջանի, Թուրքմենստանի և Ղազախստանի հետ հարաբերությունները: Այս առումով, բացի նրանից, որ Ադրբեջանն ու Թուրքմենստանը սահմանակցում են Իրանին, այդ երկրները նաև մատակարարում են Իսրայելի նավթի սպառման 90%-ը²⁰: Հետևաբար, բացի իրենց ռազմավարական դիրքից, այս բոլոր պետությունները հետաքրքրություն են ներկայացնում Իսրայելի համար, քանի որ թույլ են տալիս բարձրացնել սեփական էներգետիկ անվտանգությունը:

2012 թ. հայտնի դարձավ, որ իսրայելական «Aerospace Industries» ընկերությունը պատրաստվում է Ադրբեջանին մատակարարել 1.6 միլիարդ դոլար արժողությամբ ՍՌՏ-եր, որի մեջ մտնում են անօդաչու թռչող սարքեր, հակաօդային և հակահրթիռային համակարգեր: Նշվում էր, որ երկու երկրների միջև համաձայնագրի համաձայն՝ Ադրբեջանը պատրաստվում է Իսրայելից գնել «Heron» անօդաչու թռչող սարքեր, ինչպես նաև «Green Pine» հակահրթիռային պաշտպանության ռադիոլակացիոն համակարգ, «Barak» հակաօդային պաշտպանության համակարգեր և «Gabriel» հականավային հրթիռային համալիրներ²¹:

Իսրայելը Ադրբեջանին վաճառում է զինվորական մեքենաներ, հրթիռների արձակման սարքեր, «Tavor» հրացաններ և զինվորական հանդերձանք: Չնայած Իսրայելի և Ադրբեջանի հետագա համագործակցությունը կախված է լինելու աշխարհաքաղաքական զարգացումներից, Իսրայելը շարունակելու է օգտագործել Ադրբեջանի հետ համագործակցությունը²²:

²⁰ Stu Костенко Ю. И., «Новая периферийная стратегия» Израиля, Вестник МГИМО-Университета. 2017. 1(52). с.101-118. http://www.vestnik.mgimo.ru/sites/default/files/pdf/007_kostenkoyui_0.pdf

²¹ Stu նույն տեղում:

²² Stu Geifman A., Course D., Israel and Azerbaijan: Geopolitical reasons for stronger ties, 2013, <https://besacenter.org/wp-content/uploads/2013/07/perspectives208.pdf>

Ադրբեջանին զենքի վաճառքը բխում է նաև Իսրայելի շահերից, որը այդպիսով պայքարում է իրանական սպառնալիքի դեմ: Մյուս կողմից, իրանական սպառնալիքի առկայության պայմաններում Ադրբեջանի աշխարհագրական դիրքը ռազմավարական կարևորություն ունի Իսրայելի կողմից Իրանի դեմ հարձակվողական կամ պաշտպանական միջոցառումներ իրականացնելու համար²³:

Ադրբեջան-Իսրայել գործընկերության ներկայիս առաջընթացը չի կարող կապված լինել միայն Ադրբեջանի և Իրանի հարաբերություններով: Իսրայելի հետ Բաքվի մոտարկման ռազմավարությունը կրում է ավելի լայն տարածաշրջանային լավաժության թոթափման բնույթ, ներառյալ՝ Կասպից ծովի շուրջ Ռուսաստանի հետ անհամաձայնությունները: Մյուս կողմից, Իսրայելը նպատակ ունի մուսուլմանական պետությունների հետ հարաբերությունների ընդլայնման միջոցով բարելավել իր համաշխարհային իմիջը: Այս առումով, Իսրայելը ձգտում է զարգացնել իր կապերը ոչ արաբական երկրների հետ:

Ի տարբերություն Թուրքիայի՝ Ադրբեջանը, իհարկե, չի տիրապետում նմանատիպ տնտեսական ռեսուրսների և ռազմական արդյունաբերության զարգացմանն ուղղված քաղաքականություն է վարում մոտավորապես վերջին 15 տարիների ընթացքում: Մյուս կողմից, Ղարաբաղյան հակամարտության չկարգավորման պայմաններում Ադրբեջանը որդեգրել է հակառակորդի զսպման և սեփական հարձակվողական գործողությունների իրականացման համար համապատասխան ՍՌՏ-երի գնման և տեղում արտադրության քաղաքականություն: Այս համատեքստում, Ադրբեջանը մեծապես կարևորում է Ռուսաստանի, Թուրքիայի և Իսրայելի հետ ռազմական ոլորտում համագործակցությունը՝ շեշտադրելով այդ պետություններից ռազմական տեխնոլոգիաների ներգրավումը և դրանց հետ համատեղ ձեռնարկությունների հիմնումը:

²³ Stu Souleimanova E., Ehrmann M. and Aliyev H., Focused on Iran? Exploring the rationale behind the strategic relationship between Azerbaijan and Israel, Southeast European and Black Sea Studies, 2014 Vol. 14, No. 4, 471–488, National Defense University Library & Learning Center